

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ.
ԳԲՎԸԳՅԱՆ

(Բ լսարան)

ԽՈԿՈՒՄ ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ *

Համատարած մութ է: Ամեն ինչ ծածկվել է խավարի ծովում:

Աղջամուղջի միջից ահարկու ոգիների նման իրենց բարձրաբերձ հասակով ու վիթխարի կազմով, ուրվականային սևությամբ երևում են Մայր տաճարի գմբեթները:

Երկնքում լուսնի երեսը տեղ-տեղ ծածկված է մութ ամպերով:

Սուրալով փչում է հյուսիսային քամին:

Ժամը 9.30 է: Սովորություն է հոգևոր ճեմարանի սաներիս, ամեն չորեքշաբթի իրիկուն հավաքվել տաճարում, խոկումի պահեր անցկացնելու: Այս միստիկ պահին մասնակցում են միայն ճեմարանի սաները: Առանձնացած, մի անկյունում քարացած, ինքնամփոփ ու երկյուղածությամբ յուրաքանչյուր ապրում է իր խոկումի պահը:

Գիշերվա այս խաղաղ պահին, **Իշման ս. Սեղանի** պլպլացող մոմի ցոլքի ներքև աղոթում ու մտածում եմ: Այստեղ ամեն ինչ ոգեկան է, այստեղ նյութը պատյան չէ, ոգին, գաղափարը գարնան հուռթի ծիլերի նման նյութը ճեղքելով հորդել են, վարարել, և ինձ թվում է, թե այստեղ, այս փոքրիկ տաճարում ջնջվում են սահմանները անսահմանի, ու հավերժի, վայրկյանի, ժամանակի և տարածքի միջև անէանում են տարբերությունները և անէացած, աղոթքով զորացած ինքնամոռաց մարդիկ ապրում են այս հազվագյուտ գերերջանիկ կյանքի պահերից մեկը:

Աղոթքը սրտի մեջ վառված մի լույս է, կարդալու համար գերագույն իմաստության օրենքը՝ Աստուծո կամքը: Աղոթողի համար Աստված սպիտակափառ ամպերի վրա չէ նստած երկնքում, Նա միայն տիեզերքի անհունության մեջ չէ, այլ ամենուր, ամեն թփի ու շլուղի, բնության մեջ տրոփող ամեն մի մասնիկի, այլև մեր հոգու մեջ: Պետք է բացանել այն թանձր քողը, որ հաճախ փակում է մեր հոգու աչքերը: Աղոթքը հոգու քողազերծումն է՝ բացահայտելու համար ճշմարտության և գեղեցկի անդրագույն լույսը: Աղոթքը հոգու տենչն է դեպի ճշմարիտը, սուրբը, գեղեցիկը, դեպի Աստված:

Մարդկային կյանքը լի է նեղություններով, փորձություններով, և մեր հոգին տառապում է մարդկային ներքին հավիտենական հակասությունների մեջ, և մարդու կյանքը տարուբերվում է անվերջ պայքարի, ներհակ ապրումների ոլորտում մինչև իր վախճանը: Ինչպես կողմնացույցի սլաքը միշտ հակված է դեպի հյուսիս, այնպես էլ մարդկային եսը հակված է դեպի աշխարհայինը, փառքն ու վայելքը:

Այս խորհրդավոր պահին, հեռու աշխարհային բոլոր հոգսերից ու ժխորից, մեզնից յուրաքանչյուրը կամենում է սրբվել, թեթևանալ ու խաղաղություն գտնել:

Աղոթքի պահը սրբազան մի վայրկյան է մարդու կյանքում, երբ նա իր ամենաթանկարժեք ունեցվածքը՝ սիրտը, պատարագում է Աստծուն: Հպատակվել ուրիշի կամքին՝ նշանակում է կորցնել ներքին անկախությունը, այնինչ այստեղ աղոթքով հոգին ոչ միայն չի կորցնում, այլև սրբվում, մաքրվում է: Ջերմեռանդ աղոթքի ազդեցության տակ մարդկային հոգին, ինչպես ամպ, լցվում է սիրո ցողով, ծարաված, բանավոր տունկերի վրա անձրևելու, բաշխվելու համար: Աղոթքը կենարար այն լույսն է, որ փարատում է մեր հոգու վրա նստած մեգը, այն բանալին, որով լուծվում է կյանքի առեղծվածը: Աղոթքով ու հավատքով լցված ու ներշնչված անհատներ շատ են եղել մեր ժողովրդի մեջ, որոնց հոգիները թափ ու թռիչք են ստացել, սավառնել երկնքի ոլորտ-

ներում և ստեղծել հոգեպարար, մարգարտաշար աղոթքներ, որոնք մոտեցրել են մարդուն հավիտենականության և ժամանակի խորհրդին: Այդ հավատքով են գործել ու աղոթել նարեկացիներն ու շնորհալիները, ոթոտնեցիներն ու տաթևացիները, որոնք որպես հայ ժողովրդի մեծ աղոթարարներ, լուսավոր աստղերի նման փայլում են հայոց պատմության երկնակամարում:

Աղոթքը սեր է, անձնվիրություն դեպի մեր երկնավոր Հայրը և երկրավոր որդիները, որ մարդկությունն է: Աղոթքը ավելի ուխտ է Աստուծո հետ, քան խնդրանք: Ի՞նչ արժեք պիտի ունենային այս մեծակառույց այուներն ու կամարները, եթե նրանց գմբեթների տակ չլսվեին աղոթքի մրմունջներ: Մարդ աղոթքով միշտ վերածնվում է և մոտենում Աստծուն՝ ձուլվելու համար Նրա մաքրամաքուր Էությանը:

Եվ ահա այս խորհրդավոր պահին, այս պատմական կամարների տակ, բոլորի սրտերից իբրև երգեհոն, միաձայն, դանդաղ և կերկեր՝ լսելի է դառնում Նարեկացու «Բարձ յինէն ողորմած, զանբերելի ծանրութիւն...» հոգեզմայլ ու հուզիչ աղոթքը:

Ու ակամա աչքերս փակվում են, և ես շշնջում եմ. «Ուղիղ եղիցին աղօթքն իմ, որպէս խունկ առաջի քո Տէր: Ուղիղ եղիցին...»: